



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1882



1317

ԱՊՈՅՈՅՑ ՏԵՍԱՐԱՆ

ԵՐԵՄԱՆԻ ՊԱՏԳՈՅ ԵՒ ԹՇԱԱՐԱԽԵԱՆ
ՀԵԴՀԱՆՐԱՊԵՍ

ՀԱՅԿԱՅԱՐԱՄԱՅ

ՍԵՐԱՆԱՑՆ


ԵՒ

ԴԱՐՄԱՆՔ ԴԵՂՈՐԱՅՔ
ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

ՅՈՐԻՆԵԱԼ
Ե Տ. ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՅԻ ՏԵՂԻԱՆԵԱՆ

ԿՈՍՏՈՆԴՈՒԹՈՒՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶՁԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ԻԱՆ

— 1880 —



Վ 4309

Դեղք եի ԴԱՐՄԱՆՔ ԵՐԵՄՆԻՑ ՑԱՀՈՑ
ՀԱՅԿԱՅ ԵԻ ԱՐԱՄԱՎՑ ԱԶՆԻԿ ՍԵՐՆԴՈՑ

ՀԱՐՑՈՒՄՆ

Ա. Պատճառն ինչ է՝ որ 1575 յամէ Տեղառն մինչեւ ցայսօր՝ որ է 1879-, Հայ ազգը կը տառապի երեսուն տեսակ թշուառութեանց ներքեւ, և կը նեղուի չարաչար յոյժ:

Բ. Եւ ի՞նչ պատճառաւ մինչեւ ցայսօր զօրութեան և հարստութեան տէր չէ կրցեր ըլլալու, և կը ծառայէ օտարներուն ամէն տեղ և ամէն գործի:

Գ. Ի՞նչ կերպով կրնայ ազատուիլ երեսուն տակ թշուառութենէ, և ի՞նչ ճամբով կրնայ ի՞նչ մինչ հարստութեան և անպարտելի զօրութեան:

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Խոնարհեցուր գլուխդ, մուտ անկիրք ոգւով գըրքուկիս գուռնէն ներս, որ քիչ ատենի մէջ յայտնի եղած երեսուն տեսակ թշուառութենէն ազատուելին յետոյ, հարուստ և իշխանական կեանք մը պիտի վարես, բայց եթէ հնազանդ լինիս դարմանին, և ընդունիս յուսով և գործադրես շարունակութեամբ ամենայն սիրով: — Վասն զի,

Դարձան է դառն՝ սուրբի ջրառար :

Ըստ երեսոյնին աշոյ ահառոր :

Կուկան զիալի ու ունեւ երկու :

Վաղ ժամ բժշկէ . կոնքնել օր ժան զը :

Մուտ առիս տղայ , ուշով դու հասուն :

Թէ մարդ ես ստոյդ և ոչ անասուն :

Գտցես քեզ դարման մտօքդ զզ այուն :

Առցես զօրութիւն յայտնի և թագուն :

Արդ մի՛ բարկանար ծանրագոյն բանից :

Եւ մի՛ վճարիր ճշմարիտ սաստից :

Մաքրութեամբ սրտիդ 'ի միտ առ զանցեալս :

Զապագայիցն հոգայ 'ի ներկոյս :

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երբոր հիւսը (տիւրկեարը) , փայտեղին հանգչարան մը շինելու ըլլայ , այսինքն աթոռ մը և այլն . նախ փայտի վրային կոչտ կեղեւը կը մաքրէ . երկրորդ՝ խորտ ու փոս տեղուանքը կը տաչէ հարթ և հաւասար կ'ընէ . երրորդ՝ ծռութիւնը կը շիտկէ , և ապա կ'սկսի իրեն գաղափարին մէջ կերպաւորեալ հանգչարանի ձեւին յարմար փայտը կտրատել , և իրաբու յարմարցնել : Յետ այնորիկ , է որ սօսինձով (թութիւնով) և է որ գամով (էքսէրով) իրարու կը փակցունէ , զկնի այնորիկ , գոյն զգոյն երանդօք կը ներկէ և այլն , կը լինի մարդու նստելու և հանգստանալու տեղիք , և աթոռ կամ մահիմ :

Եւ ահա՝ ասոր նման , մարդկային ընկերութեան մարմին մի կազմելու համար , այսպէս , նախ պէտք է ժամանակ , Բ. աշխատութիւն շարունակ , Գ. նիւթ , Դ. գործիք , Ե. արհեստաւոր գործող : Որ առ ընկերութեան չկնքը հաստատ կիման վերայ շինուած ըլլալով , հաստատուն և տեւողական մնայ :

Արդ՝ փայտ , այսինքն մարդիկ , ունիմք , բայց թանձր կեղեւօք պատեալ , ինչպէս որ գրքիս մէջ պիտի տեսնաս , գործիք կայ՝ բայց աւրած է , չի՛ կտրէր : Արհեստաւոր կայ , բայց բանեցնող չկայ . ժամանակ կայ , աշխատող չկայ . սօսինձ և գամ կայ , փակցնող չկայ : Ասոնց ամենը՝ պիտի տեսնես գրքուկիս մէջ : —

Եւ ահա ասոնք ամենը կարդի դնելու համար , ծայրէ 'ի ծայր կարդալէդ և խմանալէդ ետքը , պիտի տեսնաս քեզի կարճ ճամբայ մի , որով պիտի կրնաս քիչ ժամանակի մէջ , նողատակիդ հասնիլ , այսինքն աթոռը շնել և մէջը նստել : —



ԲԱՆՔ ԱՌ ԳՐԱՊՅԱՆ

ՀԱՐՑՈՒՄ

Ուստի՞ կու գաս դու , ո'վ բեռնաւորեալ ,
Գլուխդ 'ի խոնարհ , դէմքդ խոժոռեալ ,

ՊԱՏԱՍԽԱՆ

Ես կու գամ չորից , աշխարհի կողմանց ,
Սակա՛ւն 'ի շինից , շատն յաւերակաց .

Հ. Ի՞նչու կոր գլխով , դիմօք խոժոռած ,
Յամը ընթացիւք , իբրու հիւանդաց .

Պ. Շատ ծանր կու գայ , բեռն իմ թիկանց ,
Ո՛ր տագնապէ զիս , վաղ ժամանակաց .

Հ. Բեռինդ մէջ ի՞նչ կայ , մեզ վաճառելու ,
Օվի կամ գինի . . . անոյշ խմելու .

Պ. Երեսուն տեսակ , անոյշ ու լեզի ,
Ունիմ կերակուր , աղի կամ անի .

Հ. Արդ՝ քեզմէ կ'ուզենք , մեր քմաց յարմար ,
Նոր մօտաներէն , հագուստ մեզ համար .

Պ. Նոր մօտաներէն , բեռս ծանրացած ,
Յարմարքն քմաց , զմեզ մահացուցած :

Հ. Ե՞րբ պիտոր բանաս , կոնակիդ բեռը ,
Ցուցունես մեզի , վիրաց դեղերը .

Պ. Ի՞նչ պիտի բանամ , վերքըդ չա՛տ հին է ,
Դեղքն զօրաւոր , քեզ կը ցաւցունէ .

Հ. Մենք ցաւ չենք զգար, քուկիւ գեղերէն,
երբ շնուռած ըլլայ, քաղցր հիւթերէն .

Պ. իմ քովս չկայ, շահախնդրութիւն,
գունով ներկուած, սուտ ճշմարտութիւն .

Հ. Առանց ներկելու, դեղ ի՞նչ հնար է,
Որ մարդ ներս առնու, զինքը դարմանէ .

Պ. դեղօրայքըս է, իսկ ճշմարտութիւն,
Զունի իր մէջը, վատ խարդ ախութիւն .
Ո՛չ քաղցր կեղծ բանք, ո՛չ անուշ ստանք,
Եւ ո՛չ մասնաւոր շահ ի՞նչ անձնականք :

Զուտ մաքուր դեղը, շուտ կը դարմանէ,
Թէ միւս դեղոցը չետ համաձայնէ,
Կու ասյ զօրութիւն տկար երակաց,
Քաջ առողջութիւն, համայնից վիրաց :

Այնք որ չեն հաճիր . և չեն ողջանար,
Բռուանց ներքեւէն, ազատ չեն ըլլար,
Զուր ջան, անօգուտ, աշխատ անդադար,
Մինչ ցգերեզման, մնան 'ի խաւար : —

ՈՂԲ ԵԻ ԱՂԱՂԱԿ ՍԵՐՆԴՈՑՆ ՀԱՅԿԱՅ
ԵՒ ԱՐԱՄԱՅ

Ո՛հ, թշնամիք առն՝ ընտանիք նորա . (Մա. Ժ. 36) :
Բայց արմատք արդարոց ո՛չ հատցի . (Առ. Ժ. 5) :

Ուստի սրտի յառաւ աղաղակէ Հայուսուն պրովանչին :

Ոնցին զինեւ ժամք և աւուրք ապերջանիկ և րօպէք,
Կեամ և վարեմ զանոսայ կեանս երջանկացայ ո՛չ երբէք,
Այլ իմ աստէն քաղին ողիք յերբ յուշ ածեմ զիմ վիճակ,
Ուն ուրէք անբաղդացայ, աշխարհէ ինձ հակառակ :

Աւո՞ զի՞ն ու ու և ու ու ու զի բժշկեց :

Լուր ինձ՝ որ յանկեղծ սրտէ տաց քեզ պատասխանի,
զի եթէ լուիցես և հնազանդեսցիս, յայնժամ
գացես բաղդն յաջող քեզ վաղվաղակի :

Ունկեղծ քիւր ճայուն, իւլ՝ չ սրտէ ուստիսուն .

Յիշեա՛ զանցան մեր ազգայնոց ա՛ռ 'ի միտ քո և հանգի՛ր,
Յե՛ս 'ի ներկայս զի՞նչ ինչ դործի զայն անխալ հա՞ն 'ի գիր
Նովին չափով առ 'ի կը սու, զալագային գուշակումն,
Գացես զնորհս քեզ անդորր կեանս, քաղցրածաշակ մեղր
ընտիր :

Ըստ առածին . Յէշէ՛ շնոցեալն և ու՛ շներկոյն և բու-
շոկեա շաղափոյն :

Ուրեմն լուարուք .

Ո՛հ, որդիք Հայկայ և Արամայ միահամուռ ազգ նո-
րա, անկան 'ի ձեռս աւազակաց . որ մերկացուցին զնա
և վիրաւորեցին՝ եղեալ զիէրս 'ի վերայ նորա և թողին

զնա կիսամահ և գնացին . (Ղ. Ա. Ժ. 55) : Ուստի՝ յոտից մինչեւ զգլուխ չի ՚ի նմա առողջութիւն , վէրք և այտումն յոյժ , և խապառ կերպարանափոխ եղեալ ՚ի մարդկութենէ . (Ես. Ա. 6) : Վասն զի և ծանեան զլադուած և շմբրիս-նէն , և ու չի ըստ զլադման կատարեալ մարդկութեան կացին հաւատարիմ յարդարութեան :

Վասն օրոյ ողբալի և ողորմեկի գտաւ Տունն Հայկայ և Արամայ հայաստան յազգու և յազինս յամենայն : Թէպէտ արմադ+ արդարոց ու հորդչ : Բայց՝ զի՞նչ շահ , զի նշանի+ առա ընդունէ+ նոր : Վասն այնորիկ : Ո՛հ , ողբամ զքեզ հայոց աշխարհ , ողբամ զքեզ հանուրց հիւսիսականաց վեհագոյնդ , զի բարձաւ ՚ի քէն՝ թագաւոր և քահանայ , խորհրդական հանճարեղ , և իմաստուն ուսուցանող , վրդովեցաւ խաղաղութիւն , արմատացաւ անկարգութիւն : — Ո՛հ , ո՛ տայր զգլուխ իմ ՚ի ջուր և զաշ իմ յազրիւր արտասուաց և լայի զժողովուրդս հայաստանի , ասէմ , զորդիս Հայկայ և զթոռունան Արամայ . (Եր. 9. 10) : Քանզի տեսանեմ , նշանի+ առ ընդունէ+ նոր . (Մր. Ժ. 56) :

Արդ՝ թոյլ տուք ինձ , զի լացից դառնապէս զտունն Արքանազեայ հայկազանց , զթոռունսն Յարեթի . մի բռնադ ատէք զիս , միսիթարել . (Ես. Գ. 22) : Վասն զի ձայն գուժեաց ՚ի Հռատամայ (հայաստանէ) . լալումն , ողբումն և աշխարումն յոյժ , վասն օրոյ լայ Հռաքէլ (հայաստան) զորդիս իւր և ոչ կամէր միսիթարիլ . զի ոչ էին որդիք նորա յանկեղծ սէրն միաբանութեան . (Եր. 31. 13) :

Զի ոչ էին ՚ի խորհուրդս աստուածապաշտութեան զի ոչ էին ըստ մարդկութեան հաւատարիմ ՚ի սէր անկեղծ ազգութեան , այլ և մոլութեան , մասնաւոր շա-

հասիրութեան , խարդախս ատելութեան ցիր և ցան ՚ի կորուստ անձանց և հարստութեան իւրեանց . (Հայոց պատր. Չամչւան Ա. Կոտր Երիւ 255) : Ո՛հ տմարդութիւն զի թշնամիք առն ընտանիք նորա :

Զի ահա՝ թագաւորն հայոց Անանէ , տայ նահատակել զԱղդէ հայրապետն , մինչզեռ նա քարոզէր յատենին զբանն իենաց : Եւ յետ սորա յաւել շարացաւ արքայն հայոց Սանատորուկ և ստեաց երդման իւրոյ և կոտորեաց զամենայն արու զաւակսն տանն Արգարու , և յաւել սպան զթաղէսս առաքեալն , և զդուստրն իւր հաւատացեալ զՍանդուխտ , և զայլ բազում յոյժ յոյժ :

Վասն այնորիկ մատնեաց Տէր զնոսա ՚ի ձեռս հեթանոսացն Պարսից և Արաբացւոց , Մարաց և Ակիւթացւոց և այլոց դաժան ազգացն արեւելից և արեւմտից , հիւսիսոց և հարաւոյ : Եւ յետ այնորիկ տիրեցին նոցա ատելիք իւրեանց , և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա . և խոնարհ եղեն իբրու զիսրայէլ ՚ի ներքոյ ձեռաց նոցա (Առա. 105. 41) : Եւ նստաւ այնու հետեւ ՚ի սուզ աշխարհն հայաստանեայց , ձեռն ՚ի ծնօտի համակեալ յարտասուս , և զրկեալ յամենայն վայելչութենէ , մենացեալ իբրեւ զայրի տըրտմագին :

Թէպէտ արմատք արդարոց ոչ հատցի (Առա. Ա. 5) բայց զի՞նչ օգուտ , զի թշնամիք առն ընտանիք իւր . (Մր. Ժ. 56) : սակայն ողորմութիւն Աստուծոյ դուրվ բազմազեղ և անսպառ . ոչ լիշելով զմեղս նոցա վասն Հայկայ աստուածպաշտութեան և վասն Արամայ բարեպաշտութեան , բազում անգամ փրկեաց զնոսա և յաջողեաց նոցա , որպէս յաւուրս մեծին Տըրտառայ հայոց արքայի . (Պատր. Հայոց . Բ. Հայ. Եր. 984) : Որպէս

ասէ պատմութիւնն . « Երանելի թագաւորն հայոց Տրդատ , բոլորովին զուարձացեալ առատաշնորհ լուսաւորութեամբ որբոյն Գրիգորի և Արստակեայ , օրքան զօր առաւելոյր . և նորոգեաց զամենայն ուղղութիւնս , զոր սահմանեալ էր հայր նորա» , և այլն . (Պատմ. Հայոց Ար. Հր. 599. 441.) : Բայց սակայն տունն Արքանաղեաց ևս քան զես հեռացեալ . 'ի կատարեալ մարդկութենէ , գառնացուցին օրքան զօր գառնադոյնս զտուօղն չնորհաց և բարեաց՝ յանուղղայ գնացս ընթացից իւրեանց 'ի վատթար խորհուրդս ամբարշտութեան : —

Ձի Արշակ Տիրանեան արքայն հայոց , յետ սպանանելց զեղմօր որդին իւր զԳնէլ , առաւել շարացեալ չինեաց զԱրշակաւանն և անդ լցոյց զշարեօր լցեալ զամբարիչտան : Եւ նոյնպէս 'ի շարիս տմարդութեան , ձեռնամուխ եղեն Մերուժան և Վահան . (Հայ. 1 Հր. Եր. 963) : Որք համարին լինել որպէս թէ՝ որդիք և թոռունք Հայկայ : —

Եւ յետ բազում շարութեանցն գործեցելոց 'ի նոցանէ , կալեալ զեղիսկողսունսն և զքահանայս կապեցին 'ի շղթայս և բազում ազգի ազգի տանջանօք վարեալ 'ի մահ , հասուցին զվախճան պատուական կենացն : —

Վասն որոյ վիշտք դժոխոց պաշարեցին զհայաստան և բազմատեսակ տանջանօք և շարշարանօք մաշեցաւ և հալեցաւ 'ի Բովս նեղութեանց և 'ի հնձանս սպանութեան . և միանդամայն ժամանեաց նմա որոգայթք :

Մինչեւ հուսկ յետոյ եղեւ գերութիւն արքային հայոց Լեւոնի Լուսինեան յԵղիպտոս և բանտարկութիւն իրրեւ զարքայն իսրայելի Սեղեկիա . (Երմ. 9 52) : Յամին 1373 փրկութեան մերոյ , և ապա վախճան կե-

նաց նորին 'ի բարիդ , և թաղեցաւ անդ , 1393 ին , և բարձաւ միանդամայն թաղաւորութիւնն հայոց և կորեաւ զլսսվին հարստութիւնն թորգոմեան ազին , և անկաւ ընդ իշխանութեամբ օտար ազգաց , և եղեն նեղիչք նորա 'ի զլուխ և թշնամիք նորա յուրախութիւն . (Ողբ. Երմ. 1 9) : Զի տէր կորացոյց զորդիս թորգոմեան վասն բազում տմբարշտութեանցն , զի լցաւ երկիր անիրաւութեանցն . (Հայ. 5 Երես 561) : Վասն որոյ 'ի հինգ հարիւր ամաց հետէ , որդիք հայկայ տառապեալ և թշուառացեալ 'ի գրունս օտար ազգաց երերեալ անտերունջ և դեգ երեալ 'ի վիշտու և 'ի ցաւս անդարմանելիս , և ցրուեալ ընդ համօրէն ոլորտս երկրի , զոլով ծառայ և սպասաւոր , այլ և այլ բարի և չար տեարց . տես 'ի մատեանսն ժամանակագրաց պատմաբանիցն հայոց , յունաց և լատինացւոց և այլոց ազգացն , սկսեալ յամի աշխարհի 1556 էն , մինչեւ ցամ տեառն 1878 , ուր պատմի զհայոց զանցիցն : Եւ մանաւանդ զջամշեան երեք հատորսն , և զպատմութեան գիրսն լաստիվերտցւոյ , և այլոց և հարց պատմիչացն , Խորենացւոյ : Եւ ուր տեսանի ընդդէմ Աստուծոյ և մարդկութեան գործեցեալ շարութիւնքն 'ի Հայկայ սերնդոցն , զոր Հայկ ոչ երբէք գործեաց , և ոչ ներէ անազորոյն , թռուանց և սերնդոցն այնոցիկ : —

Ուրեմն մաղթեսցուք առ տէր Աստուած , զի ներեսցէ տանն Հայկայ գործեցելոց շարեացն վասն ամենայն հայազդի ծառայից իւրոց , որք արդարութեամբ և առտուածապաշտութեամբ գնացին առաջի Տեառն Աստուծոյ :

ասէ պատմութիւնն . « Երանելի թագաւորն հայոց Տրդաս , բոլորովին զուարձացեալ առատաշնորհ լուսաւորութեամբ որբոյն Գրիգորի և Արստակեայ , օրքան զօր առաւելըյր . և նորոգեաց զամենայն ուղղութիւնս , զոր սահմանեալ էր հայր նորաւ , և այն . (Պատմ . Հայոց Արք . Եր . 399. 441 .) : Բայց սակայն տունն Արքանազեայ ևս քան զես հեռացեալ 'ի կատարեալ մարդկութենէ , դառնացուցին օր քան զօր դառնագոյնս զուուօղն չորհաց և բարեաց՝ յանուղղայ գնացս ընթացից իւրեանց 'ի վատթար խորհուրդս ամբարշտութեան : —

Զի Արշակ Տիրանեան արքայն հայոց , յետ սպանանելց զելքրօր որդին իւր զԳնէլ , առաւել շարացեալ չինեաց զԱրշակաւանն և անդ լոյոց Կարեօք լցեալ զամբարիշտսն : Եւ նոյնակս 'ի շարիս տմարդութեան , ձեռնամուխ եղեն Մերուժան և Վահան . (Հայ . Ա Հարեւ . 963) : Որբ համարին լինել որպէս թէ՛ որդիք և թոռունք Հայկայ : —

Եւ յետ բազում չարութեանցն գործեցելց 'ի նոցանէ , կալեալ զեսիսկոպոսունսն և զքահանայս կապեցին 'ի շղթացս և բազում ազգի ազգի տանջանօք վարեալ 'ի մահ , հասուցին զվախճան պատուական կենացն : —

Վասն որոյ վիշտք դժոխոց պաշարեցին զհայտստան և բազմատեսակ տանջանօք և չարչարանօք մաշեցաւ և հալեցաւ 'ի Բովս նեղութեանց և 'ի հնձանս սպանութեան . և միանդամայն ժամանեաց նմա որոգայթք :

Մինչեւ հուսկ յետոյ եղեւ գերութիւն արքային հայոց Լւսոնի լուսինեան յԵղիպտոս և բանտարկութիւն իրբեւ զարքայն խրայելի Սեղեկիա . (Երէ . 9 32) : Յամին 1873 փրկութեան մերոյ , և ասկա վախճան կե-

նաց նորին 'ի բարիդ , և թաղեցաւ անդ , 1893 ին , և բարձաւ միանդամայն թագաւորութիւնն հայոց և կորեաւ զլսավին հարստութիւնն թորդունեան ազին , և անկաւ ընդ իշխանութեամբ օտար ազգաց , և եղեն նեղիչք նորա 'ի գլուխ և թշնամիք նորա յուրախութիւն . (Ուժ . Երէ . 19) : Զի տէր կորացոյց դորդիս թորդունեան վասն բազում ամբարշտութեանցն , զի լցաւ երկիր անիրաւութեանցն . (Հայ . 5 Երէ . 561) : Վասնորոյ 'ի հինդ հարիւր ամաց հետէ , որդիք հայկայ տառապեալ և թշուառացեալ 'ի դրունս օտար ազգաց երերեալ անտերունջ և դեղ երեալ 'ի վիշտս և 'ի ցաւս անդարմանելիս , և ցրուեալ ընդ համօրէն ոլորտս երկրի , զորվ ծառայ և սպասաւոր , այլ և այլ բարի և չար տեարց . տես 'ի մատեանսն ժամանակագրաց պատմաբանիցն հայոց , յունաց և լատինացւոց և այլոց ազգացն , սկսեալ յամի աշխարհի 1856 էն , մինչեւ ցամ տեառն 1878 , ուր պատմի զհայոց զանցիցն : Եւ մանաւանդ զջամշեան երեք հատորսն , և զպատմութեան զիրսն լաստիվերտցւոյ , և այլոց և հարց պատմիշացն , Խորենացւոյ : Եւ ուր տեսանի ընդդէմ Աստուծոյ և մարդկութեան գործեցեալ շարութիւնքն 'ի Հայկայ սերնդոցն , զոր Հայկ ոչ երբէք գործեաց , և ոչ ներէ անազորոյն , թոռանց և սերնդոցն այնոցիկ : —

Ուրեմն մազթեսցուք առ տէր Աստուած , զի ներեսցէ տանն Հայկայ գործեցելոց չարեացն վասն ամենայն հայազգի ծառայից իւրոց , որք արդարութեամբ և աստուածապաշտութեամբ գնացին առաջի Տեառն Աստուծոյ :

Մաղրանք առ Աստուած, վասն ազատութեան
սերնդոցն Հայկայ .

Ո՞հ, ըստ Եվեկիայի քեզ մազթեմ փրկիչ, յիշեա
զայնոսիկ զորդիսն Հայկայ որք ճշմարտութեամբ և ար-
դարութեամբ և կատարեալ Աստուածապաշտութեամբ
գնացին յամենայն յօրէնս քո անարատ առաջի քո սուրբ
սրտիւ . (Եւ. 38 3): Եւ ըստ Յօնանու աղաղակեմ առ
քեզ տէր սաբաւօր, Աստուած հզօր, միթէ՞ մեր-
ժեցաք միանգամայն յերեսաց քոց, և ո՞չ եւս յաւել-
ցուք տեսանել զհայաստան քեւ փառաւորեալ, և յա-
ռաջին փառան ժամանեալ պէրճասցի յուրախութեան:
Զի ահա 'ի նեղութեան մերում կարդամք զքեզ տէր՝
մեզ 'ի յօդնութիւն, տո՛ւր մեզ տէր, տո՛ւր մեզ,
զփրկութիւն . (Յն. 2 3): Իբրեւ զտակառապետն Փա-
րաւօնի, բաժակն ուրախութեան 'ի ձեռին մերում կալ
յազատութեան 'ի խնջոյս փառաց քոց տէր . (Ծնդ. 40
21): Պարզեւեա տէր զթմբուկն օրհնութեան 'ի ձեռս
մեր իբրեւ Մարիամու քեռ Ահարոնի, հարկանելով
երգել զօրհնութիւնս ազատութեան մերոյ 'ի ձեռաց
թշնամեացն . (Եկչ. 15 21): Զի ահա ժառանգութիւն մեր 'ի
նժդեհութիւն . (Աղջ. Երմ. 2): Որբ և այրի եղեալ
անխնամ և անտէր մնացաք, զի ոչ գոյ մեզ հայր բաց
'ի քէն, ո՛ խնամատար փրկիչ, յիշեա միանգամ և
տես բարերար, որ ինչ անցք անցին ընդ որդիս և սե-
րունդս Հայկայ ընդ սիրելի ծառայի քո, հայեաց 'ի
նեղութիւնս մեր և 'ի նախատինս մեր և 'ի տարագրիլ
մեր 'ի բնակութեանց, զոր կրեմք շարունակ 'ի հինգ
հարիւր ամաց անտի 'ի ձեռաց անգուտ անօրինացն :

Ո՞հ, ով տէր, միթէ՞ հարքն մեր մեղսն, և մեղք
հարցն մերոց, ընդ մեզ ելին : Ահաւասիկ տես բարե-
խնամ տէր, զի մորթք մեր կարկամեցան իբրեւ զթոնիր
հնացեալ : Եւ մինչեւ յե՞րբ մոռանաս զմեզ, և մին-
չեւ յե՞րբ բարձրասցի թշնամին 'ի վերայ մեր և 'ի վե-
րայ զաւակաց մերոց, մինչ խսպառ մոռանայցե՞ս զտունն
Արամեան, մեք լուաք 'ի դաւթայ, թէ՝ ո՛չ խսպառ
բարկանայ մեզ տէր, և ո՛չ խսպառ պահէ ոխս յաւի-
տեան : Ապա ընդէր կաս մինչ ցարդ 'ի հեռաստանէ և
անտես առնես զտունն Հայկայ 'ի դէպ նեղութեան :
Արի՝ տէր, և փրկեա՛ զմեզ վասն անուանդ քում սրբոյ:
Ե՛կ բա՛րձ զնախատինս որդոց չնորհաց քոց, և օրհ-
նեա՛ զհայասան զհողեւոր որդիս սուրբ եկեղեցւոյ
քո, կեցո՛ տէր, և ասլրեցո՛ զհայկազինսն, վասն Նոյի
սիրելց քոց և ամենայն ծառայից քոց : Եւ պահանեա՛
ընդ հովանեաւ ամենազօր աջովդ քով սրբով, և տես-
ցեն տեսլիք քո և ամաչեսցեն, և մի՛ կարասցեն այսու-
հետեւ ասել, վաշ վաշ, զի ընկլուզաք զնա, և յաղ-
թեցաք նմա : Հաս 'ի թիկունս մեր, զի նուալեցաք
յոյժ : Ո՞հ, ո՞վ տէր, ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ մե-
զիցէ բաց 'ի քէն, զի դու միայն ես առանց մեղաց,
մեք թոռունք Հայկայ և սերեալ 'ի սխալոտն Աղամայ .
(Ծնդ. 18 27): Հող և մոխիր, որդն եմք և ոչ եմք մարդ
նախատինք մարդկան : Բայց արդ՝ չնորհի քո տէր, և
ողորմութեան խան արօտի քո, եմք և ժողովուրդ եր-
կիրապագու ամենասուրբ անուանդ . (Հոմ. 9 25) : Ու-
րեմն մի՛ յիշեր զմեզս մեր զառաջինսն, և մի՛ զհարցն
մերոց : Քանզի նեղութիւնք սրտից մերոց բազումք հ-
ղեն յոյժ յոյժ, և 'ի վշտաց մերոց հան զմեզ : —
Եթէ ոչ հեղցես զնորհս քո 'ի մեզ ողորմութեամբ
քով, ապա ո՞ւր երեւեսցի ողորմութիւն քո առ մեզ,

զոր երբեմն երեւեցուցեր և հեղեր 'ի նպատ լերին ,
յորժամ ներսէս ծառայ քո իրրեւ զՄովսէս բաղկա-
տարած կայր յաղօթու , յազատութիւն ժողովրդեան
իւրոյ . (1 Հր. Երեւ 466) : Արդ զնոյն առ այժմ մաղթէ
առ քեզ տէր տունն Հայկայ և Արամայ , զի հեղուլ
կաթիլ մի ողբրմութեան և մարդասիրութեան չնորհաց
քոց , 'ի բնակութիւնս և յորդիս Հայկայ և Արամայ ,
և սրբոյն գրիդորի բազմաշարչար նահատակ ծառային
քո , որով հանգիցէ անձն նորա 'ի բարութեան և զա-
ւակ նորա ժողովեսցի 'ի հայրենիս իւր հայաստան աշ-
խարհ : Ուրեմն տարածեա զբազուկս չնորհաց քոց և
ժողովեա զցրուեալ զորդիսն չնորհաց քոց : Ո՞հ , ո՞վ
տէր , վասն երից մանկանցն խոնարհեալ իջանես 'ի
մեղսալիցն բարիլօն 'ի հնոցն բորբռքեալ հրոյն և ան-
կեզ պահես զնոսա և փրկես . (Դն. Յ. 59) : Հիմ ո՞չ
իջես 'ի հայաստան 'ի փրկութիւն տառապեալ ժողո-
վրդեան քո , 'ի ձեռաց անդութ դահճացն : Ո՞հ , ո՞վ
տէր , որ վերակացու լինիս որպայ քաղաքին Երուսա-
ղէմի և պահես 'ի սրայ կոտորմանէ զօրացն Սենեքերի-
մայ . (Ես. 37 55) : Զիա՞րդ , ո՞չ պահեսցես զհայաս-
տան աշխարհ , զբնակարանն որդուց թուրդումեան . (Եր. 58 15) : Աղաչեմ զքեզ բարեխնում տէր , զի զերե-
միան և զդանիէլն , զՑովսէփ և զիսրայէլն , գլխովին
աղատեցէր և զՑուշան փրկեցէր . (Դն. 14 42) : Եւ
զիա՞րդ ոչ փրկեսցես զտունն Հայկայ , զի ահա տէր ,
ամբարտաւանիլ ամբարիշտին այրիացեալ տունն Աղքա-
նագեայ այրեցաւ և տոշորեցաւ . (Սր. 41 14) : Ուս-
տի սասանեալ ըստ ամենայնի և զարհուրեալ միանգա-
մայն տունն Հայկայ և Արամայ անշշունջ անկեալ 'ի
խոր սրտէ ողբալով աղաղակէ առ քեզ տէր ասելով :
Տէ՛ ո՞ն զի՞ն իսո՞ւ առանիլ յայսմ նշուառաննեան . (Գործ.

9 6) : Զի միրաւորեալ աւաղակացն կիսամահ անկ-
եալ միամ ողբալի . (Ղէ՛ Ժ. 56) : Եւ ասէ տէր
յոդն իս՛շ , և նօթուիւն ՚ի էւն զանէիսանառնեան սուելի
ոժոյ շնո՞ւն . (Ես. 52 2) : Եւ յայնժամ պատմեսցի քեզ
արժանն և պիտանին :

Բանքն Աստուծոյ առ տունն Հայկայ և Արամայ .

Ո՞հ , լուարո՛ւք բնակիչք Երկրի . զի՞նչ ինչ առնելի
էր տանն Հայկայ և սերնդոց նորա ես ոչ արարի , ա-
սացէք ինձ որդիկը Աղամայ և չնորհաց : Ծնաւ Հայկ
յամի աշխարհի 1227 ին . և օրհնեցի զնա և զորդիս նո-
րա , և բարձրացուցի 'ի փառս և 'ի յաղթութիւնս աշ-
խարհիս , զի նա մինչ դեռ մանուկ հասակի և թուով
սակաւաւոր և տկար զօրութեամբ կայր 'ի դաշտն Սե-
նաարայ , և յայնժամ ետու նմա ոգի զօրութեան մեկ-
նիլ 'ի բելայ , և դալ 'ի հայրենիս իւր յԱրարատ աշ-
խարհ , և իրեւ եկն , և օրհնեաց զիս և դոհացաւ զի-
նէն , և յաւել ետու նմա զօրութիւն յաղթութեան
յաղթել բէլի , յորմէ ողջոյն ազգ մարդկան սարսեալ
և սասանեալ գողային , իսկ նա միայնակ արձակմամբ
մից աղեղան յանուն իմ 'ի կոր կործանեաց զմնեղէն
լեառն զիէլ , և երկիրեպատ ինձ , և օրհնեաց զիս և
փառաւորեաց , քանզի արար ինեւ յաղթութիւն մեծ :
Ուստի յետ այնորիկ բարձրացուցի զնա քան զամե-
նայն որդիս մարդկան որ 'ի վերայ Երկրի , և խոնարհ
առնելով զիշխանն առաջի նորա , որք չուրջ զնովաւ
գրացիք էին նմա : Եւ նա՝ իրեւ ճանաչելով զերախ-
տիս , գոհացաւ և օրհնելով սուրբ սրտիւ Երկիրապա-
գեաց ինձ , և յաւելաւ յօրհնութիւնս . նոյնհետայն
և ես յաւելի տալ նմա չնորհս , բաղումս , և յարուից

յերանաց նորա զքաջն Արամ զվեհն զհայկաղունս , որ
արար յանուն իմ քաջութիւնս բազումս և ընդարձակ-
եաց զտէրութիւն իւր 'ի լերանց Կովկասու մինչեւ ցլե-
րին Տորոսի , և զթշնամիս նորա Նիւքար , զբարչամ և
զՊայշապիս խոնարհ արարի ոտից նորա , և իրրեւ նա՝
գոհանայր զինէն և ճանաշելով զերախտիսն յաւել
զօրհնութիւնս , եւս քան զեւս , ես յաւ ել ինմա զփառս
և զպատիւս , տալով նմա թագաւորս հզօրս զՊարոյր ,
զԱրտաշէս , զՏիգրան և զայլս բազումս , որք յաղթեցի
ազգաց և ազանց և հանդիսացան փառօք : Միանդա-
մայն 174 նահապետօք և թագաւորօք պատուեցի
զնա , և դարձեալ նա՝ ոչ պակասիւր յօրհնութիւնս և
'ի գոհութիւնս , և կատարեալ սիրով պաշտէր զիս ,
և ես փառաւորելով զնա , թագաւորք ազգաց խոնար-
հեալ ծառայեցին նորա գահին , և հոգւով լցեալ 84
հայրապետօք փայլեցուցի և արամի հանձարեղինօք չուրջ
զարքայական գահիւն պարառեալ զարդարելով և ըզ
թիւ սերնդոցն մինչ ցերեսուն և վեց միեօն բազմա-
մացուցեալ հասուցի , և ամենայն բարութետմի երկրի
լցուցի , մինչդեռ նա մեծագոյն մասամբ սերնդոց փա-
ռաւոր առնէր զիս և դնայր յարդարութեան ճանա-
պարհս : « Եւ իրրեւ կաղաց 'ի շաւիլս արդարութեան
յաւուրս Լեւոնի Լուսինեան հայոց արքայի Ռուբին-
եանց , և կորացան յանօրէնութիւնս իւրեանց . լուեցին
ձայնք օրհնութեանց , և դաղարեցան արդարութեան
և ողորմութեան գործք , և բանք ճշմարտութեան ,
փոխանակ զի սւնէր տալ ինձ խաղող քաղցրութեան
և նա յանկարծ երեր ինձ գուշ անիծից և խաղող
դառնաւթեան , ուրեմն լուիցեն երկինք և երկիր , նո-
քա դաստ արասցեն ընդ իս և ընդ այգին իմ տուն
Հայկաց Արամայ , զի եղն ծանեաւ զստացիչ իւր և

Էջ զՄսուր տեառն իւրոյ , իսկ նոր իսրայէլ տուն Աս-
քանազեան Հայկայ և Արամայ զիս ոչ ծանեաւ , և
աղաղակ շարութեան նորա ել առ իս , քանզի՞ զո՞ 'ի
ճշմարտախօսիցն որբոց . և արդարադատ արանցն ոչ
հալած եցին և սպանին . (Խոր. Պր. 32. 87. Եր. 167 276):
Եւ ահա մուտ 'ի պատմութիւնս Զամշեան (Հո. Ա. Բ. Գ.)
և տե՛ս (Եր. Ա. Հո. 65 75 101 212 18 76 575 425
34 47 67 568) : — Եւ արդ հիմ ողորմեցայց այնու-
ցիկ , որք չունին երբէք զողորմութիւն 'ի սիրտս իւր-
եանց առ ընկերս : Եւ զիա՞րդ գթացայց առ այնսսիկ
որոց 'ի սիրտ նոցա չիք նշոյլ գթութեան առ եղրարսն
իւրեանց . Ես. Ա. 2) : Զի բազում անգամ կամեցայ
փրկել զնոսս և ածել յուղղութիւն և ոչ կամեցան :
Ուստի կամովին ենթարկեցին զինքեանս բազմատեսակ
թշուառութեանց պատժոյ աշխարհիս այսորիկ , որպէս
զի դարձցին 'ի չարեացն և բժշկեսցին , ըստ այնմ թէ
« դարձարուք առ իս և ես դառնամ առ ձեզ » քանզի
զոր սիրէ տէր խրատէ , տանձէ զամենայն որդի զոր
ընդունի . որով ապաշխարեալ փրկեսցին . ըստ զրոյն
(Ա. Ճ. Ճ. 51) : Զի յոտից մինչեւ ցգլուխ չիք 'ի նմա
առ ողջութիւն . (Եղ. Ա. 6) : Քանզի ծանեան զԱսու-
ուած և զմարդ կութիւն , և ոչ զԱսուուած պաշտեցին ,
և ոչ կատարեալ մարդկութեամբ գնացին յարդարու-
թեան յօրինսն : Ուստի յարեան ոմանք որդիք ժանուք
և երկեցաւ սերմն անօրէնութեան . վասն որոյ ընկեցից
զնոսս յերկրէ , հայաստանէ յերկիր օտար , զոր ոչ
դիտեն նորա և հարք իւրեանց , և ծառայեսցեն այ-
նոցիկ . որք ոչ արասցեն նոցա զողորմութիւն . (Եր.
Ճ. Ճ. 45) : Լուեցիր հայու զաւակ Աստուծոյ խօսքեան
մեղադրանքները և գանգատանե՞ըը . այո՞ : Տէ ժաման
ըրէ , այն օրէն մինչեւ ցայսօր . վերադ եկած առաջ

ու մէկ տեսակ ձախորդութիւնները , որն որ , հաւատացեալի մի համար Աստուծմէ եկած պատիժներ կը համարուին , որ մինչեւ հիմա չէ զգացեր հայը , և ոչ ալ զգալիք ունի : Թէպէս որբառու որբառոց ոչ հորոշէ . (Առ. Ժ. 5) : Բայց ինչ օգուտ , նշանիւ ուն ընդունիւ նոր . (Մաս. Ժ. 56) : —

Ահասադէ ուս զաւածին նշանոց զղտուիւ . ոչ որուիւն է Հայութուն շրուեաց զհայու իբրեւ իւ : —

Առաջին պատիժ եւ թշուառոքին .

Կը հարցունեմ քեզմէ հայու զաւակ , աշտարակաշինութեան ժամանակի ամբարտաւան մարդկանց հըսկայից . (ՁՆ. Գ. 11) : Թշուառութեան պատճառն ի՞նչ էր , և ի՞նչով թշուառացան : Զէ որ լեզուներու բաժնուելով անմիաբան ըլլալը և Սենաարայ դաշտէն հեռաւոր օտար երկիրներու մէջ ցրուիլն էր այո՛ :

Եւ հիմա ալ ի՞նչ տարբերութիւն ունի հայոց զաւակներու իրարու լեզու չհասկնալով անմիաբան հայաստանէն դէպ 'ի հեռաւոր օտար յերկիր երթալ ցրուիլը , յիշեալ ամբարտաւան հոկայից ցրուելէն . կը պատասխանեմ հայը , երբէք տարբերութիւն մը չունի , երբոր կը տեսնեմք յայտ յանդիման հայու զաւակներ հողագունափ տակն ու վրան և չորս բոլըրտիքը ցրուեռած և հազար մղոներով իրարմէ հեռի , զիտեսթէ հրէից համար Երեմիայ մարդարէի լրած մարդարէութիւնը ճիշդ հայոց համար եղած կ'ըլլայ :

Ի՞նչպէս որ կ'ըսէ : Տաց զնոսս 'է ցրուածն ընդ ամեայն բաժանութուննեան . (Երմ. 24 9) : Տէ՛ , հրամէ տես քեզի , հայու զաւակները հայաստանէն ո՞ւր և ի՞նչ տեղ պիտի գանաս : Ահաւասիկ , Հնդկաստան և Յունաստան , Պարս-

կաստան և չըլաստան , Վրաստան և Ասորեստան , Բուսաստան և Արաբստան , Կորդուաստան և Լեհաստան , յԵգիստան և Բարիլօն , Ուլահալուկտան , Բարիլ Վենետիկ , Վիէննա , Գերմանիա , Լօնտրայ , Հուովմ , և այլն , մինչեւ ցԱմերիկայ :

1374

Ո՞ւր է Մատրաս , ո՞ւր է Կոստադնուալիս , ո՞ւր է Մասկուա , և ո՞ւր է Զմիւնիա , և ահա այսուէս հայու զաւակները իրարմէ հարիւրաւոր և հազարաւոր մղոներով հեռի երկիրներու մէջ ցրուած կը բնակին որբ և այրի , ծառայ և սպասաւոր օտար տէրութեանց հսկատակ , այն եւս իրարու հետ ատելութեան ոգով անմիաբան ուստի Զաքարիայի , Երեմիայի , Եսայի մարդարմէութիւնները հայու զաւակաց վերայ ճիշդ կատարուած կը տեսնուի , ուր որ կ'ըսէ Զաքարիայ , « Հանից զնոսա ընդ ամենայն յազգու , զրո ոչ գիտեն . (Գօր. 7 14) : Նոյնպէս Երմ . « ցրուեցից զայր և զեզրայր իւր 'ի միտախն ասէ տէր . (Երմ. 15 14) : Եւս և Եսու . « զի մեղքն հայկազանց գրեալ է զրչաւ անդամանդեայ եւ զեգաւ , 'ի տախտակս սրտից նոցա : Քանզի հպարտացեալ որդոց (Հայկայ) գնացին 'ի բարձր պարանոց յօնոնք արկինարկին . (ԵՆ. 5. 16) : Արդարեւ եթէ ձըմարիտՀայկայ յերանաց իջած սերունդէն հարազատ ծնունդ ըլլային միաբանութենէ չին զատուէր , և օտարին հետ չին երթար ըստ գրայն , « ոչխարք իմ զեկտ օտարի ոչ երթիցեն » . (Ցօհ. 10 օ) : Բայց սոքա գնացին օտարին հետ , և զօտարն սիրեցին , ասէմ , զանմիաբանութիւն , զոգի ատելութեան , կիրք , կամապաշտութիւն , եսութիւն և ինքնահաւանութիւն , և զայլն , զորս Հայկը և Հայկայ ճշմարիտ սերեալ որդիքին չեն սիրած և չեն ալ սիրեր , վասն զի Հայկայ հարազատ որդիք են : իսկ անոնք որ օտարին ետեւ կ'երթան իրենք ալ օտար սէր

բունդէն պիտի ըլլան. (Մէկն. Նքի. Եր. 740) և միայն սուրբ աւազանի միրտութեամբ 'ի հաւատաս Քրիստոսի ընդ որդիս Հայկայ միացեալ, հայացեալ են, բայց 'ի սերունդէ ճիշդ Հայկայ չեն, անոր համար վաստ ճամբայ երթալ իրենց համար ամօթ չէ. զոր օրինակ, իրեն եկեղեցականը հեղնել և ծաղրել, իշխանը բամբասել, ծէրը անպատռել, ծնօղը քամահրել. կրօնքը այլայիլ, խաղաղութիւնը վրդովել, խոռվութիւնը սիրել, անմիաբանութեան մէջ խաղալ և խնդալ, և.

Այս ամենը Հայկայ սերունդ չեղողներու գործ է, և ոչ ճշմարիտ Հայկայ և Արամայ հարազատ որդոց և թոռանց, վասն որոյ յոտից մինչեւ ցգլուխ չիք 'ի նմա առողջութիւն, զի յայլեալ ազգաց, այսինքն Հրէից, Պարսից, Ասորոց, Աղվանից, Վրաց, Մարաց գուցէ Արաբացոց ևս, և՛, 'ի հաւատս միացեալ ընդ Հայս ճանշեցին Աստուածը ու չպաշտեցին և մանաւանդ Հայկականհարդկութեամբ յարդարութեան չկեցան, խաղաղութիւնը և միաբանութիւնը չփրեցին, կարելի է որ բուն ոմանք ճիշտ Հայկայ զաւակներէն ալ հետեւելով ասոնց, սորվեցան գեշութեան հետեւիլ. ըստ այնմ թէ քիսանակեցան ընդ հեթանոս և ուսան զգործս նոցան և եղեն թշնամիք ընտանիք նորա. (Մասն. Ճ. 56.): Թէև արմատք արդարոց ոչ հատցի: (Առև. Ճ. 5.): Աւ ասկէ աւելի պատիժ ինչ կրնայ ըլլալ ազդի մի այսօր. որոյ մէջը խառնուրդ գտնուելով, խառնուրդ վատ գործքերով անմիաբան 'ի բարին, ցիր և ցան կ'ըլլան ստար տէրսւթեանց հողերուն մէջ, Հայկայ ոմանք զաւկներն ալ իրենց հետ 'ի միասին:

Հիմա այս այսովէն ըլլալով, չըլլաց որ յուսահատիս զաւակս, ատ ցրուեալները միացնելու զօրաւոր գարմանը պիտի տեսնաս ծանօթութեան (1) թուանշանին մէջ,

ուր որ դիւրին միջոցով մի բոլոր ցրուեալները սիրով կը միացունէ, որով մեծաբայլ յառաջադիմութեան մէջ պիտի քալես լսելով: Տեր ուղիւն դժնաց մէր . . . զբոքն յեւաց Գրոց ուղիւն որո՞ 'է մշտ ուեր . . . վան չի ուեր լսու է և կեանց իմ, ես յաւմ երիւաց և՛: Տէ՛, հրամէ՛ մտիկ ըրէ լսելով հայու տան վերան թափած և սրտի վերան ձգուած երկրորդ պատիժը, որ տակաւին հայը ոչ առաջին պատիժը և ոչ սոյն երկրորդը զգացիր. գիտես թէ և ոչ ալ պիտի զգայ, որն որ կը տանի մինչեւ ցայսօր: —

Պատիժ երկրորդ ուսք եւ սլաք, հայու որտին փուղ եւ տատասկ.

Երբոր առաջին մարդը Աստուծոյ պատուերը չպահելով յանցաւոր գտաւ նէ, Աստուած զանի պատժելու համար դրախտէն վոնտեց: Որբան որ վոնտեց՝ բայց գարձեալ ողորմելով հետու երկիր չաքսորեց այլ և դրախտին առջեւ դրաւ, որ տեսնալով զդրախտը զջախտ, և վերստին արժանի ըլլայ կորսունցուցած փառացը: Նոյնպէս Հրէից ազգը երբոր մեծագոյն մասամբ մեղանչեց Աստուծոյ առջեւ, և Աստուած զանոնք պավախսարութեան մէջ դնելու համար իրբեւ պատիժ մատնեց զիրենք Նարուգողնոսորայ ձեռքը, Բարիլոնի մէջ գերի մնալ 70 տարի սահմանեալ ժամանակաւ, և ոչ հայուն պէս ցիր և ցան ըրաւ զանոնք, և ոչ ալ 70 տարիէն աւելի թոյլ տուաւ մնալ 'ի գերութեան (Դան. Թ. 24) իսկ Հայկայ խառնուրդ իրը որդիքը՝ մարդկութեան և Աստուծոյ պարագը չճանչելով, մեծագոյն մասամբ յարդարութեան ճամբէն դուրս ընկած՝ պավախսարութիւնը չընդունելնուն համար, ինչ-

պէս որ կերեւի Հայոց պատմութեան , (Ա. Հայոք . Երե 434 , և 444 , Թէլ 472 Արքի .) . Աստուած ալ վճռեց հայոց յանցաւոր զաւակացն առժամանակեայ ապաշխարութեան պատիժ , ցիր և ցան ըլլալ առանց որոշման թիւ ժամանակին , որպէս զի այսօր դարձի ՚է լոր ճանապարհն և կեցցէ : Բայց Հայոց և կամ լաւ ևս ասել յօտար ազգ ացմէ եկամուտները , ոչ զղացին և ոչ դարձան . աւելի ճշմարիտ Հայկայ զաւակները անգամ հերդնելով նախասեցին : Վասն որոյ երկարեցաւ առժամանակեայ պատիժն դարաւոր ժամանակաւ մինչև ցայսօր . և Երեմիայ մարդարէի գրածը , Հայ անուն ազգի վրայ կատարուեցաւ , թէ և հրէից համար խօսուած էր , ինչպէս որ կ'ըսէ . «Գրետ լայր դրաժէր , մ' աճեցէ յառարու իւր , և մ' աճեցէ ՚է լառակէ դրայր այր , ևն . (Եր. 22. 30) :

Արդարեւ հայկազանց տունն օր քան զօր չաճելով պակասեցաւ , ինչպէս որ կ'երեւի յայտնի : Երեսուն և վեց միլիոն Հայ զաւակներէն պակսելով՝ եկաւ հասաւ չորս միլիոնի , այն ևս ցիր և ցան օտար հողերուն մէջ , և օտար տէրութեանց հպատակ և ծառայ , և իւր մէջ ալ ատելութեան ոգով պաշարեալ անմիաբան և խոռով , ինչպէս որ վերը առաջին պատժոյ մէջ յիշուած է և տեսաք : Ուրեմն ցաւօք սրտի ըսենք . Ո՞հ , ո՞ւր ես ընտրեալ յորսվայնէ և վշտացեալդ ցաւօք և հեծութեամբ մարդարէդ Երեմիա . ի՞նչ եղան Արարատեան թագաւորութիւնները , և ո՞ւր կորեան գնացին , և անոր գունդերը ո՞ւր թռան Հայաստանէն և անհետ եղան . որ ասկէց 2321 տարի յառաջ ձայնը բարձրացուցած որոտալով , Աստուծոյ հրամանն գոշելով կ'ըսէիր . և Պատուեէր ո՞ւր յի՞ն Արարատեան նահանջութեանց և Աստունաղէն գնդէն , իսկնեցէտ նոզաւ

Շետականը և ելեւ ՚է վերա , (Եր. 51. 27.) և Ո՞հ , ի՞նչ եղաւ և ուր զնացին այդ բազմածնունդ Հայկայ և Արամայ ճշմարիտ որդիկը , ո՞վ Երեմիա :

— Ուր պիտի երթան . ահա Աստուած թոյլ ետ ամուլ օտարները բազմածին ըլլալ , և բազմածին Հայկայ զաւակաց ծնունդը պակսիլ , և նուազիլ ՚ի ծննդոց . քանզի Տէր փակեաց զարգանդն Հայկազանց շծնանիլ և չաճիլ : Վասն որոյ պակասելով պակասեաց զերեսուն վեց միլիոն ժողովուրդն և եթող չորս միլիոն , այն ևս ցիր և ցան ատելութեան ոգուով խռովեալ և անմիաբան , խղճութեամբ և հարստահարութեամբ , ևս առաւել աղիտութեամբ պարաւանդեալ , օտար հողերու մէջ . ո՞հ , բարեգութ Աստուած ողորմած , ողորմեալ և զթա :

Տեսա՞ր հիմա Հայ անուն զաւակները ի՞նչ աստիճան կացութեան վիճակի մէջ ըլլանին , որ երրէք չուրացուիր . վասն զի Աստուածը և մարդկութիւնը ճանշեցին , ոչ կատարեալ մարդկութեամբ արդարութիւն դործեցին և ոչ արարիչ Աստուածը փառաւորեցին և կամ զոհացան . անոր համար ուարէն մինչև զլուխը տեղ մը ողջ չկայ . թէ և արդարներու արմատը ըլխանդարիր , բայց ի՞նչ օգուտ՝ թշնամին իրեն տանը միջէն է . ու մինչև հիմա Հայու զաւակները զգացին և զգալիք ալ չունին , ու վատ ճամբանին շարունակելու ետեւ են . երրէք չեն յիշեր թէ Արտաքոյ միութեան չիք փրկութիւն : Ասիկայ լսելովդ շըլլայ որ յոյսդ կտրես . քանզի ասոր դարմանը այնքան հեշտ և դիւրին է , տե՛ս ծանօթութեան (2) թռականը , որ մէկ անգամ գործ ածելու ըլլաք , քիչ միջոցի մէջ Հայոց աղդի մարդաթիւր ՏՕ միլիոնի պիտի հասնի , և ծովու աւազին նման պիտի բազմանան . ան ատեն

պիտոր ըսէք . Օրհնեացուք զջէր «ի ահունը ծնառ եօն
և բաշտնենտ նուազեցն ՚ի ծննդոց » :

Բայց դու առայժմ մտիկ ըրէ Եսայի մարդարէին
ճայնին՝ որ կ'ըսէ . «Զ-ընէր , շ-ընէր Սիօն , և զգեցէ ը-
շբանին ո՞ւ , և նընակե՞ւ զի՞շին յորից ո՞ւց »
Ապա թէ ո՞չ՝ լո՛ւր զերրորդ պատիմն և տես որ կայ
յայտ յանդիման աշխարհի աշաց առջեւ ՚ի դառնու-
թիւն և ՚ի կոկիծ ձշմարիտ Հայ որտերուն :

Երրորդ պատիմ թշուառուրեան
Տանն Հայոց աւերութեան :

Ո՞հ , ասկէ աւելի կոկծալի ցաւ չըլլար մարդու մը
երրոր իրեն աշքին առջեւ տունը աւերակ և զաւակ-
ները օտար երկիրներու մէջ ցրուած տեսնէ . հիմայ
տե՛ս , Հրէից ազգը թէպէտ զերի գնաց ՚ի Բարելօն ,
և տաճարն աւերեցաւ , և քաղաքն Երուսաղէմ ան-
քնակ անապատ դարձաւ , բայց ետքը դարձեալ շին-
ուեցան և պայծ առացան . իսկ հայու որդիկը Հայաս-
տանին դուրս ելան չելան , երկիրը դարձաւ փարեր ,
քաղաքները աւերակ . վանօրացք և եկեղեցիք կործա-
նուած , պալատները և բերդերը քայքայուած . Զա-
քարիա մարդարէի ըսածը լմնաց հայու տան վերան ,
որն որ հազարաւոր տարիներով Հրէից ազգին համար
մարդարէացած էր թէ . «Հանէց դուստ ընդ ամենայն աղբս ,
և երիւր աղականեցի զի՞ն նոցոց » : (Զ+ր. 7. 14) : — Նոյն-
պէս Եսայի մարդարեամբիւնը . «Երէիք յեր աւերտի , +ո-
ղու յեր հրէիտ» , ևս : (Եայ. 5. 5) : — Ո՞հ , Աստուած , զիտես
թէ Քրիստոս տէրն մեր ալ հայոց տան համար ըսած
ըսայ , նոշեաւ էնէ յեւ որուն յեր աւերտի . (Մոր. 25. 58) :
Ո՞հ , ո՞վ տէր՝ ո՞ տայր զգւուխ իմ ՚ի ջուր , և զաշս

իմ աղբիւր արտասուաց և լայի զհայրենի զաւերակսն
և զկործանումն : — Ուրեմն ելի՛ր , ելի՛ր հայու զաւակ .
և կանգ ա՛ռ բարձր տեղ մը և երեսդ դարձուր հա-
յաստան աշխարհի հայրենեացդ վերան , և տեւ-
րակ կործանուած քաղաքները , մեծաշէն բերթերը և
պալատները , Անի , Արծէէ , Մեծէկերտ ,
Մանաղկերտ , Նիքրկերտ , Դուին , Զմէկածագ , Ափս , և
այլ բազումք յայտ :

Տէ՛ եկուր զաւակս , ես և դու մինակ մտաց աչօք
նայինք հայաստանի աւերակներուն վերայ և ամայու-
թեան ողբալով ըսենք : «Զէ ՞՞՞ զտուս նորա մէնց-
էու ուղուն բաղաժաղով , և եղեւ իբրւ ոյրէ լցեալ որդու-
նեամք ՚ի մէնջ հենանաց . և իշեան աշետրէն եղեւ հարիս-
ուու » : (Ուբ. Ա. 1) . —

Արդ՝ տեսար աչօք և լսեցիր ականջօք հայոց տան
թշուառ խեղճութիւնը , ու հայը տակաւին չզգալով
ու ատելութեան հոգւով օտար հովի և իշխանութեան
մէջ զիրար կը հալած են և կը զրպարտեն , ինչպէս որ
տեսանք աչօք և լսեցինք ականջօք , տե՛ս ծանօթու-
թեան (5) թուանշանը , ուր պիտի տեսնաք , զարմանա-
լին և զարհուրիք և դողայք , ու պիտի ըսէք ճանա-
պարհորդութիւն Լեհաստանի գրքւոջ 32 երեսին մէջ
գրուած աղ բանը . «Զէ վ-ու հոյոց չե հարէ յայուց ինդր-
էւ լինած . զի ինտեանտ են զօրաւոր նիշնամի ՚ի իրուստ ող-
քին և բաւական են սսաց ի-ըւեանց կորորէւ զիրեարու : Ա՛լ առ-
կէ աւելի պատիմ և թշուառութիւն շկրնար ըլլալ աղ-
գի մի , որ իրեն սուրով ինքը կը փիրաւորէ և կը մեռ-
ցունէ :

Թէպէտ , Արմադար որդուրց ու հարցէ , կ'ըսէ Սողօմօն
(Ա.մ. Ե. 5) : Բայց ի՞նչ շահ , թշնամիք առա ընդունիք նո-
րու , կ'ըսէ Քրիստոս Տէրն մեր , (Մոր. Ժ. 57) : Զի որով

Հետեւ Աստուածը ճանշեցինք, և չպաշտեցինք և նորա կամքին հնազանդ շեղանք, ու մարդկութիւնը գրկեցինք, ու մարդկութեամբ արդարութիւն չդորձեցինք, Ռւստի արժանի եղանք աւերակութեան պատիժը կրեցւ զայս տեսնելովդ մի՛ լքանիր և մի՛ վահատիր. աւերակ Երուսաղէմը վերստին կանդնօղ էակը հայաստանն ալ պիտի կանդնէ, բայց դեռ զօրաբարէլ Արտաշէսին սենեկապեա չէ եղած, ասէց խմացիր միջոցի երկարութիւնը, բայց դու զաւակս մտիր ծանօթութեան (4) թուանշանը, հոն պիտի տեսնաք աժանագին դարմանը և ուրախ պիտի ըլլաք ըսելով, արդարեւ եթէ ոչ տէր շինէ զտունն, 'ինանիր վաստակին շինողք նորա, ուստի ան ատեն պիտի աշխատիք չորրորդ պատիժը աղդին վրայէ վերցնելու, որ ծանրացէր կը կենայ:

Պատի՞ ջորրորդ ծոլլ աղօրից . . .
Որով գրկիմք բարեաց լընջից :

Ինչողէս որ վերը ըսինք, հրէից պատիժը 70 տարի ժամանակաւ վճռւած ըլլալով, ժամանակը լրացածին պէս Աստուած ալ իրենց մեղքերուն ներելով քաւեց: Վասն զի մեղքերնին ճանշելով զղացին ու աղօթք ընելով խոստովանեցան մեղքերնին ու ըսին: Եւ արդ՝ ամէ ուեր, մէտ մէզաւ առաջի ու. և մատնեցեր զեղ ՚ի յեռն նշանաւոց երաց: (Եսթ. Ճ.Դ. Յ. Յ.): Զեղը մանկութեան և զանդէւութեան մերում ճէ յելեր այլ յէլեւ զեղ ողբանութեամբ ուզ: (Սրմ. Ի.Դ. 7): Զի մեղաք և անօրինեցաք և յանցեաք արստամի լինիլ ՚ի քէն, և առաւել մեղաք ամենայնի պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք և ոչ պահեցաք, և ոչ արարաք որպէս պատուիրեցեր դու մեզ զի բարի լինիցի մեզ: (Գանէլ Գ. 29): Եւ ամէնայն իսրայէլ իսր-

դաշն առ ուեր յամէնայն զօրութիւնէ իսրայէլու: Ի՞նչու համար վասն զի ման սուալի նոց էր, կ'ըսէ, զի որովհետեւ Հողերեռնէս ասորոց թագաւորի զօրագլուխը պաշարած էր քաղաքացւոց վերայ. և հուր սուր կ'ըսպառնար զիրենք կոտորելով մահացունելու, ասոր համար կ'ըսէ Ա. գիրքը անկաւ Յուղիդ ՚ի վերայ երեսաց իւրոց՝ զմինիիր ՚ի վերայ գլխոյ իւրոյ և ասէ, լուր ողջնից ախողնոյ ու, և ծանո՞քոյն բաշուն ու, ևս, հիմա մտածենք զաւակս, այս սրտի մտօք աղօթքին պտուղը ի՞նչ եղաւ քաղաքացւոց համար, ահա տե՛ս ի՞նչ կ'ըսէ սուրը գիրքը, և անկա՞չ վերայ նոց ա՞ն և դուռըն յոց, առ հաստրուկ ՚ի գումարութ դուրքան: Կը տեսնա՞ս, ինչպէս ահազին զօրքը, որ սուր կ'ըսպառնայր և մահ, շուտ մը ցրուեալ կը փախչին, սկսաւ Յուղիթ օրհնել յԱստուած և գոհուանը ՚ի ուետունէ (Յուդիթ. Թ. 1 ԺԵ. 2): Քանզի դաշնաց Աստուած զայէ նախասորին ՚ի հեղանիւն: Աղօթքը ի՞նչ քան զօրաւոր ըլլալը հարցուր Եղիային, Եղեկիային, Երից մանկանց, Աննայի մօր Սամուէլի, և մանաւանդ Առաքելոց, որոնք քեզ թուղ պատմեն, թէ սրտի մտօք առ Աստուած աղօթքը, ի՞նչ քան զօրութիւն ունի, ասոր համար Յիսուս ըստաւ, որինուն իացէւ և ողջնո որոքէւ, զի մէ անկանչիցէ ՚ի դոյշութիւն, ևս. կամ պարտէ յամենայն ժամ յաղօթս կալ և մի՛ ճանճրանալ ուրեմն՝ շիտակը խօսի՛ր, հայու զաւակ, ընդհանրապէս հայ ազգի և հայաստանի բարուորմանն համար, Երբ, կամ ուր, ժողովրդ եան մեծագոյն մասամբ սրտի մտօք աղօթք մի ըրինք, և արդ՝ չընելէ զատ, աղօթասէրներն ալ քամահրեցինք, և ծուլութեան մէջ քնացաք. ուստի՝ չը կրցանք երթալ հայաստան և նորա տաճարին մէջ խունկ ծխելով ըսէինք, հրէից պէս, սուրտի եղէ ես, ոյտ սուր-

շէս 'ի ուսն ուեառն երթեցուտ : ինչպէս որ հրէայք ըսկ-
լով ելան յԵրուսաղէմ և շինեցին տաճարը, ու բերկ-
րութեամբ գո՞ն սրաի ըսին, Ուրախ եղու հոփանակ ուռարցն
յոր ուսուտ ԴՄՐԱԾԵՆՆ, և ամոցն յոր իոնարհ արարեր զիջ, (Սլմ. Զթ. 15) : իսկ ողորմելի հայու զաւակները հա-
յաստանէն ելլերով, հայաստանն ալ մտացնուն իսպառ
հանեցին, ալ ոչ հայաստանը յիշեցին և ոչ վերադառ-
նալու փափագեցան, ուստի աղօթք ալ չըլին, և ար-
ժանի չեղան սուըրք կծմիածնի Տաճարին մէջ աղօթք և
պատարագ ընելով խունկ ծիսելու : Այլ և ուր գնա-
ցին և հոն մնացին իրենց արտաքին կացութեան փիճա-
կէն հոգալով միայն, և ներքին հարստութիւն մ'ալ
չկրցան ձեռք բերել : Հազիւ թէ յաջողեցան զիրար
հալածելու և փճացնելու, տե՛ս ծանօթ ութեան (Յ)
թուանշանն : Վասն որոյ երեսուն ութ ամեայ անդա-
մալոյծին պէս քաղաքականութեան սելրվայ աւտպանին
քով անկեալ մնացին և տակաւին կը մնան, և քաղումք
մոտան ողջացան և յառաջադիմեցին, և Հայկայ սերուն-
դը, որ առաջինն էր, յետին եղաւ . երբոր հայկալանց
տէրութիւնը կը փայլէր, ո՞ւր էին ան ատեն, Գաղ-
ղիան, Անդզիան և Ամերիկան . և կամ Արաբացին :
Բայց անմիաբանութեան և ամբարտաւանութեան ոգին,
Հայկալանց զաւկները ըրաւ յետին, ու յետինները առ-
աջին, (ՄՊ. ԺԹ. 50) : Ու մինչեւ ցայսօր ամեն ուրէք
ուր որ՝ հայու զաւակներ կան մեծագոյն մասամբ ամ-
բարտաւան և անմիաբան, ո՞չ կատարեալ մարդկու-
թեամբ և ոչ ալ կատարեալ Աստուածապաշտութեամբ
կրցան զիրար շահէլ, վասն որոյ առէ + 'ի դժուէ զդուն+որն
և դուս+ այն ո՞ւ առնչից+ ուսն ուսն+որ, (ՄՊ. Իկ. 28) :
Վասն որոյ ալ ոչ կրցաւ տաճարին մէջ ուրախութեան
տօն կատարել հրէից նման, և ոչ ալ խունկ ծիսէլ :

Ուստի՝ եկաց մնաց ամբարտաւան լիրբ ոգով աս-
տանդական թափառեալ, Եւ յաւել, այն որ չունիմք
ունիմք կ'ըսենք, զայն որ չափինք առինք կ'ըսենք + ինչ-
պէս որ Առաքեալն Յակոբոս կ'ըսէ, Գ. Յ : «Յանիսյ + և
ոչ առնչի, նախանչից և չի չորէ + հառնիլ, կառնչի + և ոչ
նի, զան չի ու ինդրէի զնուրին ընկերն» ևս : Ըստ Կարե-
կացւոյն, թէ անկնդան և խօսան մեռեալ : ինչու որ,
Աստուածը և մարդկութիւնը ճանշեցին, ոչ Աստուածը
գործով պաշտեցին և ոչ ալ կատարեալ մարդկութեան
սահմանին մէջ կեցան, որոյ դարմանը տե՛ս ծանօթու-
թեան (Յ) թուանշանը : Եւ արդ՝ չորս տեսակ ձախոր-
դութեամբ մինչդեռ թշուատութեան ներքեւ ընկած
կը հեծէ, հինգերորդ պատիմն ալ վերան առած կը
կը տագնապի, թէպէտ արդարներու արմատը չպակ-
սիր, բայց ի՞նչ օգուտ, թշնամին տանը մէջն է :

Պատիժ հինգերորդ կարի յոյժ քշուան . . .
Զվաստակ նորա, քշնամին եառ :

ՊԱՏԻԺ Ե. ԵՐՈՐԴ

Հրէից ազգը թէ գերութեան ժամանակին 'ի Բա-
րելոն, և թէ հրէաստանի մէջ իրեն քրտանց վաստակի
պտուղը ինքը կը վայելէր, թէ և երբեմն կը յափշտա-
կուէր այլազգացմէ, բայց ոչ դժբաղդ հայու սերուն-
դին պէս չարունակ, որ կինդ հարիւր ամաց հետէ նո-
րա վաստակին պտուղները օտարներ կը խլեն նորտ
ձեռքէն և կ'ուտեն, զի հայը չէ կրցեր իրեն ձեռքի և
քրտանց վաստակին պտուղը ուտել, քանզի գիտես
թէ Աստուածային վճիռը կնքած է, որ հայու զաւակ-
ներու հացը օտար ազգերն ուտեն ու վայելէն . ըստ

այսմ թէ . շունչորհ ներ , ուստի յեր օրոք է իբիշեն , ուերեալ և կոքանեալ յաջդաց օրոքը , ուստի վաստիւնչի և պահի իբիշեն զիստակն յեր , (Եւյ. Ա. 7 : Ե. 3) : Ասեցի՞ր հայու զաւակ , հրէից ՚ի պատիժ եղած մարդարէւթիւնը , քու վերայ գործ ադրուած կը տեսնուի 1500 թուականէն Քրիստոսի , մինչեւ ցայսօր , որ է 1879 : Ուրեմն ելի՞ր զաւակն տե՛ս ասիս տաճկաստանի մէջ , արդե՞օք կրնաս այսպիսի հայու գերդաստաններ գըտնալ , որ իրենց հարստութիւնը յորդոց յորդիս հինգ վեց դար չարունակ վայելած ըլլան : Ասկէց ՚ի զատ , կրնա՞ս մէկ քանի գործարաններ ցոյց տաս , որուն մէջ գոնէ հարիւրաւոր և ոչ հազարաւոր , հայ մանկափ գործաւոր եղած օրական ապրուստնին հոգալով ուրախ որտիւ գործատէրը փառաւորէին և զլստուած օրհնելով գոն ըլլային : Եւ կամ , ագարակներ , առագաստաւոր նաւեր , և կամ վաճառառուններ , չոգենաւ , և նաւակներ , որոց մէջ հայոց զաւիներ ապրուստնին կը հոգան , բնաւ երբէք չես կարօղ ապահովեալ մին ալ ցոյց տալ . զի որովհետեւ չունի , և քանի որ որտի մտօք վատ գործերէն են չմնար , առ յաջողութիւնն ալ չպիտի ունենայ : Բայց սակայն , երբոր մաքսաւորին պէս իրեն մեղքերը ճանչէ , և դաւիժ մարդարէի նման կէս գիշերին ելլէ , ու արտասօք խոստովանի մեղքերը , ու անառակ որդոյն պէս որտի մտօք դարձի գայ , ու ըսէ . Աստուած քաւեա՛ զմեղաւորու . (Ղէ՞ . Ճ. 15) : Ի մէջ գիշերի յառնէի և խոստովան լինէի , և արտասօք իմավք զանիւղինս իմ թացի . (Ալմ. Զ. 7) : Եւ կամ , հայր՝ մեղայ յերկինս և առաջի քո , (Ղէ՞ . Ճ. 18) : Ան ատեն Աստուած պիտի ողորմի Հայկայ սերունդին , և պիտի հանէ ձախորդ գութեան բանտէն , Յովսէր գեղեցկի պէս . (Ծնդ. իլ.

40) և փառաւորէ Հայկայ և Արամայ սերունդը : Ապա թէ ոչ հայուն փառակը օտարները ուտելէն զկնի և ինքն ալ փուշ ու տատառի մէջ տառապեալ ու տագնապեալ , երերուն ու գեղգերուն . հայու վայութեամբ պիտի մնայ ծառայ ու սպասաւոր օտար ազգերուն : Վասն զի ծանեաւ զլստուած և ոչ իրեւ զլստուած փառաւորեաց , և ոչ կատարեալ մարդկութեամբ եկաց յարդարութեան , թէպէտ , արմար արդուրաց ոչ հոռցի , բայց մեծագոյն մասամբ , Աշումէ առն ընդանէ նորտ . (ՄՊ. Ճ. 57) :

Ուստի յետին ազգատութեամբ կը տոչզրի , փորը անօթի , սիրաը կը մարի , առանց հանդերձի ցուրտէն կը միի , լցու չունի , մութը կը նսաի , վասն զի աչք ունի չունենէր , ականջ ունի չլսեր , բերան ունի չխօսիր ձեռք ունի չգործէր , ոտք ունի չքալէր : Ահա տակաւին այս ողորմելի կացութեան վիճակին մատնուած , վեցերրորդ պատիժ ալ գիրկը առած անհոգ կը նստի , ապա ուրեմն ասոր գեղ և դարման ինչէ , մտի՞ր ծանօթութեան (7) թուանշանն և տե՛ս , բայց մի՛ յուսահատիր վերոյիշեալ խօսքերէ , վասն զի դարմանը չուտ կ'ողջացունէ և կը հարստացունէ թէ որ դարմանը հնազանդութեամբ գործածես , ապա թէ ոչ վեցերորդ պատիժն ալ պիտի վշտացունէ քեզի , ուրեմն ըսւ մոիկ ըրէ , վեցերորդ պատիժը կարի կակծամի է :

Պատիծ վեցերորդ յոյժ ողորմելիք . . .
Թշնամիք հայոց նորա ընտանիք :

ՊԱՏԻԺ ՎԵՅԵՐՈՐԴ

Սուրբ գրքէն կիմանամք որ հրէից ազգը , թէ յեղիպտոսի թէ Բարիլօնի և թէ իսկ հրէաստանի մէջ , չատ մը նախատուեցաւ և չարաշար անարդուեցաւ ոչ այնքան իրեն եղրայրներէն և զաւակներէն , որքան որ կրապաշտ անթլիատ հեթանոններէն և այլազգ օտար թշնամիններէն : Իսկ հայու տունը , օտար ազգացմէց ցաւ և ցասումներ , վիշտ և տառապանքներ կրելէն ետքը , իրեն իսկ սիրելի զաւակներէն և եղբայրներէն ալ նախատուեցաւ և կը նախատուի , վնասուեցաւ և դեռ կը վնասուի և կը նեղուի տեսակ տեսակ զրապատութիւններով . Տէ՛ հրամէ՛ զաւակս ուչի ուշով մտիկ ըրէ , թէ որ հայու տունը շւայլաբար խելքին դալած ումպէտ ծախքերը շննէր , և զիրար հալածելու և վատ կիրքերնին յագեցնելու հարստութիւննին չփճացնէին : Ուր կ'ըլլար որ հարուստ և աղքատք միակամ և միախորհուրդ Մշյ սուրբ Կարապետի , կեսարիոյ սուրբ Կարապետի , Ախս , և Պօլիս սուրբ Փրկչի վանքերուն մէջ գիշերօթիք սւսումնարան հաստատէին , և ծախուց համար ապահովեալ եկամտից աղքիւրներ բանային , և Հայ զաւկները մեծ հսկողութեամք կրթել տային , և մեծամեծ ընկերութեամք գործարաններ և վաճառատուններ բանային , որ սւսումնական երիտասարդներուն ապրուստի դուռները բաց պատրաստ ըլլային , որ ճեմարանէն ելածնուն պէս գործի մէջ մտնային : Պօլսոյ մ.ջ 42 եկեղեցի շինելուն , 20 եւ-

կեղեցի հերիք սեպելով , անոնց մեծամեծ ծախքի դըրամով շահաբեր անկորուստ կալուածներ առնուեր , և նոյնպէս վանօրէից և եկեղեցեաց աւելքով ամուլ գոյքերը կալուածոց վերածուել , և զողնորուն զոհ չըլլար , և յետ այնորից խնայողութիւնը ձեռք առնելով շւայլաբար ծախքերը շըլլունը , որ կիմա ազդային մեծ հաստատուն և անփոքուստ շահագեր հարստութիւն մի ունեցած կ'ըլլար , և որով դոնիչ մշտնշնական կը զերաց և քահանայացուած կրթարան մի , և պատանեկաց աղաթական և գործնական արհեստուներով խռան մեմարան մի կ'ունննաք , յայնթամ թէ որ ցրուեալ զաւկները դրացներու մեմարանին և տունին եռ բերելու կարօղ չըլլար , դոնէ ձեռքին տակ եղած զաւկներուն առիթ չեր տար երթալու , և Հայկայ Արամայ տունը և եկեղեցին անպատուելու կակծանսօղական խօսքերով նզովնելու : Ահաւատիկ տե՛ս ծանօթութեան (8) թուանշանը , ուր որ սիրտի տեսնաք հարիւր հազարի չափ հայ զաւկներ այլ և այլ դրացներու դրան մէջ կանգնած օտարին կաթը ծնելով , օտար բնութիւն ստանալով անարդանաց մանր քարերով և փուշերով կը վիրաւորն և կը խոցուեն հարազատ ծնողի փափուկ սիրտը , և մարմինն : Ահա ամեն տեղ ատ անկարգութիւնները թագաւորած է , ահա՛ թօգաթ , փոքրիկ ժողովուրդ մի ունի 7 եկեղեցի բազմածախ չէնքերով և օրական ծախքերով իրարու կից , որ 2 եկեղեցի բաւական էր , ահա՛ Ամասիա , 3 եկեղեցի , որ երկու կը բաւէր , ահա՛ Սեբաստիա , 4 եկեղեցի , 2 կը բաւէր , ահա՛ Անկուրի , 7 եկեղեցի , որ մին կը բաւէր , և առ հա՛ այսպիսի աւելըրդ ծախքեր շատ և շատ եղած է , և տակաւին կ'ըլլուի , է որ կալուածներու եկամուտոներով և է որ՝ հանդանակութեամբ , լաւ ևս ըսել մուռ

բացկանութիւնով , որոց բոլորովին հիմն աւ աւազոյ վերայ խախուտ և անհաստատ :

Չունենալով հաստատուն չէնք մի , որուն հայ մանակափի յենլով , դրացներու չէնքերուն յենելու կարօտութեւն չունենային , և ծնօղին վերայ անարդանաց խօսքերը չտեղացունէին . և աւելտարանական պատուէրին դէմ չմեղանչէին որ կը հրամայէ , պատուէլ ծընողն . (Մատ. ԺԹ. 15) : Պատուէա' դնոյր ո՞ւ և լուսոր , չէ երիշանեաց լիցն : Աիրելի զաւակս զայս լսելովդ չինի որ յուսահատիս , ատիկայ Աստուծմէ դեռ զեցերորդ պատիժն է Հայկայ սերնդոց վերայ , վասն զի ծանեան զԱստուած և զմարդկութիւն , ոչ որպէս իրրու զԱստուած փառաւորեցին , կամ գոհացան , (Համ. Ա. 21) և ոչ կատարեալ մարդկութեամբ , արդարութիւն դորսեցին և ճշմարտութիւն խօսեցան , վասն որոյ յոթից մինչ շշլու չէ ՚ի նաև առաջնորդնեան , (Ես. Ա. 6) : Ուստի պէտք չէ փառտիլ , այլ և յոտին կա՛ց թօժափեա՛ զփոշին եսութեան և կամապաշտութեան և կրից քոց մուտ վազվաղակի ՚ի ծանօթութեան (9) երրորդ թուանշանը , հոն տեղ ասոր դեղ և դարմանը պատրաստ է , յուսով գործադրելու աշխատիր , որով կարօղ ըլլաք 7 երրորդ պատիժը ազդայնոց վրայէն վերցնելու :

Ահաւասիկ տես կետեեալը .

Պատիժ եօրներորդ վատ ատելորեան .
Որ լինքն ունի զոգի խոռովորեան .

ՊԱՏԻԺ Է. ԵՐՈՐԴ

Բանն բարկութեան որ եղեւ յԱստուծոյ առ ազդն հրէից , թէ՛ Արագեցէն ՚ի նոսա զոհի իւրիւնեան և հարցէ

այ չընկեր իւր . . . և հարցի հանունին ընդ ծերոյն և անարդն ընդ պատուականին , և եղիցի ժողովուրդն էբրլ զւահանայն , և ծառայն էբրլ լուկը . (Ես. Գ. 5) :

Մատիկ ըրի՞ր զաւակս , Աստուծոյ պատժական խօսքերը , որ հրէից համար ըստ , այո՛ : Բայց ի՞նչ օդուտ որ՝ լման Հայկայ և Արամայ սերնդոց վերայ կատարուեցաւ և տակաւին կը կատարուի մինչև ցայսօր : Վասն վի չկայ հայաբնակ տեղ մի , որ անմիաբանութեան վատ խորվ ոդին մուտ առած ըլլայ , կ'ուղեսնէ , սկսիր Պիլոց , մինչև ցբարիլօն , և անտի մինչև ցԵցիպտոս , ևս , բոլոր հայոց գիւղ և քաղաք ազատ չեն այդ գիւղական չար ախտէն , ահա ասիկայ կարդա՛ 1844 թը ուականէն մինչեւ ցայսօր որ է 1879 բոլոր հայ լրագրաց թերթերը լաւ մը , և տե՛ս հայ զաւկներու որչա՞փ խոռով ատելութեան ոգոյն գերի ըլլալին , և անկէց ետքը եկուը մտի՛ր ծանօթութեան (10) ներորդ թուանշանը , որ հոն տեղ , պիտի տեսնաք յականէ յանսուանէ . ատելութեան ոգոյն գերի եղող , և վասառող թէ նիւթապէս և թէ բարոյապէս հայկական խոռմը . ան ատեն դու ինքնիդ պիտի ըսես , թէ՛ հայր ահա ասկէ աւելի պատիժ չիրնար ազգի մի ըլլալ , երբոր զաւկները զիրար հալածելով փճացեր են , և ճանապարհորդութիւն Լեհաստանի գրքի 32 երեսին մէջ գրուածը միշտ է , որն որ կ'ըսէ , զի վասն հայոց ու հարէ յայլոց ինորդէւ վնշնամէ , զի ինքեանք են զօրաւոր թը նամի ՚ի կորուստ ազգին , բաւական են սուրբ իւրեանց կոտորել զիրեարս :

Բայց գարձեալ զաւակս ըլլայ որ վհատիս և լքանիս , զի Աստուած կարող է բժշկել հայկական տուանը առ ախտէն , զի անհնարին ՚ի հարդիկանէ , հնարաւոր էն Աստիշոյ , (Մատ. ԺԹ. 26.) :

